գնացաք մօտ ի թէրզի պաշին փաշայի, վասն զի ծա-
նօթացաք ընդ նմա ի յԵրուսաղէմ յայնմ ամի որ և
մեքն անդ էաք։ Եւ յայսմ ժամու քաղաքս ամենայն
ընդ առաջ գնացին վէզիրին, ծառայք թագաւորին
զիւրեանց զկերպս զգենլով. ալայ արարեալ մեծա-
մեծացն և ուլամայիցն, պարոնացն և վուզարայիցն
պար առեալ առաջի նորա դաս դաս բերեալ մուծին
ի քաղաքս և երգիչք առաջի նորա երթեալ գովասա-
նէին [եղա]նակաւք։ Այսպիսի փառօք և մեծ պատուով
և յանցս ճանապարհին որ անցանէր՝ ամբոխ քաղաքիս
ամենայն ելին ի տեսանել զնա. և մուֆտին երթայր
ընդ ձախակողմն՝ նորա ձիոցն հաւասարեալ։ Այնպիսի
մեծաւ տեսլեամբ եկն յապարանս իւր, զոր յառաջա-
գոյն զարդարեալ էին վասն նորա, և տալով զնա Ա-
յիշէ սուլթանին որ անդ լինէր, զոր ի վաղուց խօսեալն
էր քոյր Սուլթան Մուրատին և Իպրահիմին։ Եւ զօրքն
ամենայն ցրուեցան և ամենայն ծառայք և մեծամեծք
գնացին իւրաքանչիւր ի տեղիս։ Երեկոյիս յայսմ զօր
ելաւ։

ԺԸ-իս օր Կիրակի. զտէֆտէրտարութիւնն ետ Ա-
լի քեհեային Տէվրիշի և զառաջին տէֆտէրտարն առ
ինքն արգիլեաց և պահանջեաց դրամ ի նմանէ և նա
գտեալ Զ քսակ և բերել ետ և ետուր ի վէզիրն և վէ-
զիրն զամենեսեան այրեալ։ Զ քսակէն և Ժ քսակ
արծաթ էլ միայն։ Եւ յայնմ գիշերի զնա ետ ի ձեռս
դահճացն սարուճայից, որ զբազումս չարչարեաց ե-
ղէգն խաղացուցանելով ի մատունս նորա. և առաւօ-
տուն տարեալ զնա ի բերդն եդին։

Եւ Բշիս (19 Փեբր.) մեծ տիւան արարեալ վէզի-
րին, և Մէլէկ Ահմէտ փաշային ետուր զՎան և Մու-
րատին զՊ (պոբոդ), և Ղաթըրճի օղլուն զՍիլիստրա,
քանզի և սա ընդ նմայ էր յորժամ եկն, և միւս ևս
Հասան և Քիւրտ Մէհէմէտ աղան՝ սոքա էին նմա հա-